

յաստանի եւ Հոռմի ոսկիին ու արծաթին հետ»⁽⁶²⁾։ Դարեր վերջ խորենացի կը յիշէ Արտաշէս-Սաթենիկի վէպը, երբ Արտաշէս «...Այսնս մորթ կարմիր, լալքա շատ եւ ոսկի բազում տուեալ ի վարձանս, առնու զտիկին օրիորդն Սաթենիկ»⁽⁶³⁾։ Ըստ երեւոյթի՝ խորենացիի «մորթ կարմիր»ը լալքան էր կամ գոնէ կարմիր մորթը (չիկափոկ) լալքայով կը պատրաստուէր։ խորենացին այլուր ալ նոյն վէպին մէջ կը յիշէր Արտաշէսի «չիկափոկ» գործածելը։

Շիկափոկը միայն Ալանաց համար յարգի չէր, այլ Հայոց եւ դրացի ուրիշ ժողովուրդներու ալ։ Հայերը համբաւեալ էին ատոր պատրաստութեան մէջ։ Նոյնիսկ Ժէ դարուն Բուքովինայի, Գորտովայի եւ Եւրոպայի մէջ այլուր հայերը նշանաւոր կաշեգործներ եւ կաշիի վաճառականներ էին։

Կարելի չեղաւ ինծի համար վկայութիւն գտնել թէ Հայերը լալքայով ներկած են։

Հայաստանի մէջ կարմիրի համար կը գործածէին նաեւ ՏՈՐՈՆ։

Տորոնը (Madder=Rubia Twotorum) կ'աճի քիչ մը ամէն կողմ եւ մասնաւորապէս կեդրոնական եւ արեւմտեան Ասիոյ մէջ։

Վաղուց ծանօթ էր հայոց։ 982էն անանուն պարսիկ ժամանակագիրը կը վկայէ որ «Պարտա... կ'արաադրէ տորոն»⁽⁶⁴⁾։ Էլ-Խաւրիսի կը գրէ. «Ռան (Երեւան) ամբողջ երկրին մէջ, այսինքն ըսել է Պապէլ-Ապուսպէն մինչեւ Թիֆլիս, տորոն կը բուսնի, եւ անոնք ատկէ մեծ քանակութեամբ կը հաւաքեն։ Այս նիւթը Կասպից ծովով կը տարուի Ճորճան (Ղիւան) եւ անկէ ալ դրաստներով դէպի Հնդկաստան։ Ամէն տեւակ տորոններուն ընտիրն է ասիկա»⁽⁶⁵⁾։ Վենետիկցի վաճառական մը նման վկայութիւն մը կը թողու մեզի ըսելով 1507ին. «(Սոյի մէջ) կը պատրաստեն առատ կարմիր ներկ, կարմիր արմատներ գործածելով, որ իրենք բահերով ու բրիչներով գետնէն կը հանեն, յետոյ Օրմուզ կը տանին, ատոնք իբր կարմիր ներկ կը գործածուին Հնդկաստանի շատ մը կողմերը»⁽⁶⁶⁾։ Ժան Պ. Թավերնիէ աւելի մանրամասնութիւն կու տայ տորոնի մասին որ Ռոնաս կը կոչէ. «Ասիկա է աշխարհի վրայ միակ երկիրը (Աստապատ) որ կ'արտադրէ Ռոնաս, որուն համար ահապին պահանջ կայ Պարսկաստանի եւ Հնդկաստանի ամէն կողմը։ Ռոնաս (Ronas) արմատ մըն է որ գետնին տակ կ'աճի լիքորիսի նման եւ անկէ շատ խոշոր չէ։ Ասիկա կը գործածուի կարմիր ներկելու, եւ ասիկա է այն կարմիրը որ կու տայ գեղեցիկ գոյնը (երանդը) բոլոր գալիպութներու (բամպակե-

(62) The Outline of History. H. C. Wells. N. Y. 1922, p. 475.

(63) Պատ. Հայոց, Վենետիկ, 1881, էջ 275։

(64) Hudud al-Alam, London, 1937, p. 143.

(65) El-Idrissi, II, p. 330.

(66) Italian Travelers in Persia, London, 1873, p. 166.